ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.08.2019թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, արձանագրեց, որ.

1. **Նարիմ ՍՊԸ**-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 436166 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն /ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը կցվում է/, և տեխնիկական բնութագիրը 1-ին րդ չափաբաժնի համար թերի է ներկայացրել. '' Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:'' պահանջը տեխնիկական բնութագրում բացակայում է:
2. **Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյանի** կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված է այլ ապրանքի տեխնիկական բնութագիր, 5, 9, 12, 17 չափաբաժինների համար տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացվել. '' Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:'' պահանջը տեխնիկական բնութագրում բացակայում է:
3. **ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ի** կողմից 3, 4, 14 չափաբաժինների համար տեխնիկական բնութագիրը թերի է ներկայացվել. '' Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը:'' պահանջը տեխնիկական բնութագրում բացակայում է:
4. **Քլին Ֆոամ ՍՊԸ**-ն 13, 15, 16 չափաբաժինների համար Հավելված 2-ը կցել է ''Տեխնիկական բնութագիր'' բաժնում, իսկ ''Այլ փաստաթղթեր'' բաժինը դատարկ է, և տեխնիկական բնութագրերում նշել է համարժեք ապրանքի անվանումը, այլ ոչ թե այն ապրանքի անվանումը, որը պետք է մատակարարի:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի և հրավերի 1-ին մասի 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ կազմակերպությունների կողմից անհամապատասխանությունները շտկելու համար:

Կարգի 48-րդ կետի 1)-ին ենթակետի ա) մասի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների մասով արձանագրված անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

2. Հաջորդ նիստը հրավիրել 05.09.2019թ., ժամը՝ 10.30-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

Վերը նշված կազմակերպություններին այսօր էլեկտրոնային եղանակով տեղեկացնել անհամապատասխանության մասին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.09.2019թ. ժամը 10-30-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով **Նարիմ ՍՊԸ-ի, Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյանի, ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՃՈՏԻ Ա/Ձ-ի և Քլին Ֆոամ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝

  1 չափաբաժնի համար **Նարիմ ՍՊԸ–ին,**

  3, 4, 14 չափաբաժինների համար **ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՃՈՏԻ ԱՁ –ին,**

  2, 5, 9, 12, 17 չափաբաժինների համար **Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյանին,**

  6, 8, 18 չափաբաժինների համար **Էկոմիքս ՍՊԸ-ին**

  13, 15, 16 չափաբաժինների համար **Քլին Ֆոամ ՍՊԸ**

  10 չափաբաժնի համար **Ռեալ Բուսինեսս ՍՊԸ-ին:**

''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՏՆ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան